



Disability
Rights
California

California's protection & advocacy system
Toll-Free (800) 776-5746

Հաղորդակցման օժանդակ միջոցների ստացում Medi-Cal-ի միջոցով

Հոկտեմբեր 2019թ., Հրատ. #7151.10 - Armenian

Գիտե՞ք, որ եթե ստանում եք Medi-Cal, և ձեր հաշմանդամության պատճառով դժվարանում եք հաղորդակցվել, Medi-Cal-ը միգուցե վճարի ձեզ անհրաժեշտ հաղորդակցման օժանդակ միջոցների համար:

1. Ի՞նչ է Medi-Cal-ը:

Medi-Cal-ը California-ի (Կալիֆորնիա) Medicaid ծրագիրն է: Medi-Cal-ը տրամադրում է առողջության ապահովագրական ծածկույթ ցածր եկամուտներ ունեցող բազմաթիվ մարդկանց: Եթե ստանում եք Supplemental Security Income (SSI) (հավելյալ սոցիալական եկամուտ), դուք ավտոմատ կերպով կստանաք Medi-Cal: Medi-Cal-ը չի նշանակում պարզապես դեղամիջոցի ստացում կամ բժշկի այցելություն: Medi-Cal-ը կարող է ներառել նաև ծառայություններ և սարքեր, որոնք անհրաժեշտ են ձեզ հաղորդակցման համար:

2. Որո՞նք են հաղորդակցման օժանդակ միջոցները:

«Հաղորդակցման օժանդակ միջոցները» սարքեր կամ ծառայություններ են, որոնք օգնում են հաշմանդամություն ունեցող անձին հաղորդակցվել: Հաղորդակցման օժանդակ միջոցները երբեմն կոչվում են Augmentative Communication Devices (ACD) (լրացուցիչ հաղորդակցման սարքեր), Augmentative and Alternative Communication (AAC) (լրացուցիչ և այլընտրանքային հաղորդակցման միջոցներ), Assistive Technology (AT) (օժանդակող տեխնոլոգիա) կամ Durable Medical Equipment (DME) (երկարատև օգտագործման բժշկական սարքեր):

3. Ես իրավունք ունե՞մ ստանալու հաղորդակցման օժանդակ միջոցներ Medi-Cal-ից:

Այո: Medi-Cal-ը կվճարի հաղորդակցման օժանդակ միջոցների համար, եթե ձեր բժիշկը որոշի, որ ձեզ համար դա «բժշկական տեսանկյունից անհրաժեշտ» է: Ընդհանուր առմամբ, ծառայությունները, պարագաները և սարքերը համարվում են «բժշկական տեսանկյունից անհրաժեշտ», երբ դրանք «կյանքը պաշտպանելու, ծանր հիվանդությունը կամ ծանր հաշմանդամությունը կանխելու կամ սուր ցավը մեղմելու ողջամիտ և անհրաժեշտ միջոցներ են»: 21 տարեկանից փոքր երեխաների համար «բժշկական տեսանկյունից անհրաժեշտ» նշանակում է «անհրաժեշտ թերությունները, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան հիվանդություններն ու խնդիրները շտկելու կամ թերթևացնելու համար»:

Շատ դեպքերում Medi-Cal-ը պետք է համաձայնի վճարել տվյալ սարքի կամ ծառայության համար նախքան այն ձեզ տրամադրելը: Դա կոչվում է «նախնական թույլտվություն»: Ի թիվս այլոց՝ նախնական թույլտվությունը կարող է լինել բժշկի կամ թերապևտի նամակը, որում կասվի, որ դուք ունեք տվյալ սարքի կամ ծառայության բժշկական անհրաժեշտություն: Բացի այդ, Medi-Cal-ը կվճարի ձեր կարիքներին համապատասխանող միայն ամենացածր արժեքով սարքի կամ ծառայության համար:

Այստեղ բերված է հաղորդակցման օժանդակ միջոցների մի քանի օրինակ, որոնք դուք հնարավոր է կարողանաք ստանալ Medi-Cal-ից.

- Dynavox և այլ Speech Generating Devices (SGDs) (խոսքախթանիչ սարքեր),
- PEC-եր (նկարների փոխանակմամբ հաղորդակցման համակարգ) և նկարներով հաղորդակցման համակարգերի այլ ձևեր,
- Տառատախտակներ կամ այբբենական տառատախտակներ,
- Պլանշետները, օրինակ՝ iPad-ը, եթե այն օգտագործվում է որպես հաղորդակցման օժանդակ սարք,

- Սարքից օգտվելու ձևերին ուսուցանող գնահատմանը կամ թերապիային առնչվող ծառայություններ:

Եթե ձեզ անհրաժեշտ հաղորդակցման օժանդակ միջոցի տեսակը հնարավոր չէ ստանալ անմիջապես Medi-Cal-ի միջոցով, կարող եք այնուամենայնիվ պահանջել այն ձեր բժշկից կամ այլ բուժհաստատությունից որպես «ողջամիտ հարմարանք»: Դրանք կարող են լինել սուրդո-թարգմանիչները, հաղորդակցում ապահովող գործընկերները կամ բրայլյան գրով գրված կամ մեծ տառերով տպած փաստաթղթերը:

Պետական ծրագրերով, օրինակ՝ Medi-Cal-ից տրամադրվող արդյունավետ հաղորդակցման իրավունքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության համար տե՛ս U.S. Department of Justice-ի (ԱՄՆ Արդարադատության վարչություն) *ADA -ի պահանջները*. *արդյունավետ հաղորդակցումը*, հղում՝ <https://www.ada.gov/effective-comm.htm>:

4. Ինչպե՞ս եմ ստանալու ինձ անհրաժեշտ հաղորդակցման օժանդակ միջոցները:

Ձեր կարիքների մասին խոսեք ձեր բժշկի, մասնագիտական հիվանդությունների բժշկի կամ այլ բուժսպասարկողի հետ և խնդրեք նրանց ձեզ համար ներկայացնել թույլտվության դիմում Medi-Cal-ին:

5. Ի՞նչ կարող եմ անել, եթե Medi-Cal-ը որոշի, որ ես չեմ կարող ստանալ ինձ անհրաժեշտ հաղորդակցման օժանդակ միջոցները:

Դուք կարող եք բողոքարկել: Եթե դժգոհ եք Medi-Cal-ի որոշումից, կարող եք դիմել Medi-Cal-ի անկողմնակալ լսումներ անցկացնելու համար: Եթե դուք Medi-Cal-ի կառավարվող բուժօգնության ծրագրում եք, կարող եք բողոք ներկայացնել ապահովագրական պլանին և դիմել անկողմնակալ լսումներ անցկացնելու համար, եթե դժգոհ եք պլանի որոշումից: Եթե դուք կառավարվող բուժօգնության ծրագրում եք, հնարավոր է կարողանաք նաև California Department of Managed Health Care-ից (DMHC) (Կալիֆորնիայի Կառավարվող բուժօգնության վարչություն) պահանջել անցկացնել independent

medical review (IMR) (անկախ բժշկական փորձագիտական քննություն): Եթե ցանկանում եք պահանջել IMR-ի անցկացում, սովորաբար սկզբում պետք է ներկայացնեք բողոքարկման հայտ կառավարվող բուժօգնության ապահովագրական պլանին: Մանրամասն տեղեկությունների համար անցեք հետևյալ հղումով՝ <http://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/Medi-CalFairHearing.aspx>. Եթե ունեք հարցեր բողոքարկման ձեր իրավունքների մասին, կարող եք զանգահարել նաև Disability Rights California-ին (Կալիֆորնիայում Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպություն):

Disability Rights California-ն (Կալիֆորնիայի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպություն) այս տեղեկատվական թերթիկը պատրաստել է «Հաղորդակցման հաշմանդամությունների մատչելիության ցանց» ծրագրի շրջանակում: Ծրագիրը նախատեսված է հաղորդակցման օժանդակ միջոցների օգտագործումը պաշտպանող առաջնորդների ցանց ստեղծելու, նրանց ուսուցանելու և ակտիվ աշխատանք ծավալելու նպատակով: Այն ֆինանսավորվում է «Ability Central» կազմակերպության դրամաշնորհով, որը նախկինում անվանվում էր «Disability Communications Fund» (Հաշմանդամության հաղորդակցման հիմնադրամ): «Ability Central» կազմակերպությունն աջակցում է այն ծրագրերին և ընդունում է այն տեխնոլոգիաները, որոնք օգնում են հաշմանդամություն ունեցող կալիֆորնիացիների հաղորդակցման և մատչելիության կարիքների բավարարմանը: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք՝ <http://dcfund.us/>